ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<26>> ----------08----------2025թ. N ՄՈ/811 -Ա

ք. Արմավիր

«ՆՈՐԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԿԱՍԵՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 108.1-ին հոդվածի 1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 13-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի սեփականության դեմ ուղղված կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության վարչության պետի 2025 թվականի օգոստոսի 25-ի N18-951կգ-25 գրությամբ ներկայացված 2025 թվականի օգոստոսի 22-ի որոշումը.

որոշում եմ՝

1. «Նորավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հովհաննես Ստեփանյանի պաշտոնավարման կասեցման պահից՝ 2025 թվականի օգոստոսի 22-ից մինչև պաշտոնավարման կասեցման վերացումը պահպանել նրա պաշտոնը:
2. Հովհաննես Ստեփանյանի պաշտոնավարման կասեցման պահից՝ 2025 թվականի օգոստոսի 22-ից մինչև պաշտոնավարման կասեցման վերացումը, նրա վարձատրությունն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափի երկու երրորդին՝ 212202 (երկու հարյուր տասներկու հազար երկու հարյուր երկու) Հայաստանի Հանրապետության դրամին համապատասխան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Восстановимая подпись

Սերտիֆիկատ՝
ԲԱՐՍԵՂ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
2808860099

X

Подписано: NIKOGHOSYAN BARSEGH 2808860099 **Բ□ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ**